

ՔՈՒՆԵՐ ՆԱԼԻԻՔ

(Հարառակութիւն, տես թիւ 8) :

24. Գող մի վաճառականի մը կա-
տակերդութեան տեղը մտնելը տես-
նելով, գնաց անոր ետեւէն՝ յուսարով
որ նորա թաւիչէ վերարկուին վերայ
եղած ոսկիէ կոճակները յափշտակէ .
և աղէկ յաջողցնելու համար անոր ե-
տեւի կողմը կեցաւ : Խաղին առաջին
մասը լըմնալու միջոցները գողը անոր
վերարկուին վրայէն սկսաւ կոճակները
փրչընել . վաճառականը զայն տեսնե-
լով, կամացուկ մի իր գրպանէն դա-
նակ մի հանեց, և ժամանակը այնպէս
յարմարցուց որ գողին ականջը կրտ-
րեց . այն ալ սկսաւ պոռալ՝ ականջս
ականջս . վաճառականն ալ իւր կող-
մէն կոճակներս, կոճակներս : Բռնէ
ահաւասիկ քու կոճակներդ, ըսաւ
գողը : Բռնէ՛ ահաւասիկ քու ականջդ
ալ, պատասխանեց վաճառականը :

25. Գիւղացի մի տեսնելով, որ
ծերունիները կարդալու ժամանակ ակ-
նոց կը գործածեն, ակնոց մի գնելու
համար մօտ եղած քաղաքը գնաց, և
յատկապէս այս գործին համար ակնո-
ցավաճառի միքով երթալով իւր միտ-
քը յայտնեց և այն աղանձալայէս քէին
վերայ զոյգ մի ակնոց դրաւ : Գիւղա-
ցին փութով գիրք մի առաւ, և բա-
նալով տեսաւ որ բան մի չէր արժեր .
վաճառականը խանութին մէջ եղած
ամենէն աղէկներէն ուրիշ քանի մի
զոյգ ալ տուաւ, բայց գիւղացին ա-
նոնցմով ալ չէր կրնար կարդալ : Երբ-
պէս ակնոցավաճառը անհամբերու-
թեամբ անոր ըսաւ . բարեկամ կար-
ծեմ թէ դու ամենեւին կարդալ չես
գիտեր : Գիւղացին ըսաւ անոր . եթէ
ես կարդալ գիտնայի, քու ակնոցներդ
ի՛նչ պիտի ընէի :

26. Կասկոնացի աղնուական մի ա-
մենեւին ստակ չունենալով, լսեց որ
պանդոկապետին մէկը աղնուականի մի
տպտակ վարենելուն համար, առար ըս-
կուդ տուեալու պարտաւորած է : Եւ
սիկայ պանդոկապետին իջեւանը գը-
նաց բնակելու . երեք չորս օր այն տեղ
մնալով՝ իւր պարտքը վեց սկուդի կը
հասնէր : Եւ աղնուականը նոյն տեղէն եւ-
լելու միջոցին՝ պանդոկապետը իմացուց
անոր որ իւր պարտքը տակաւին չէ վը-
ճարած, և զիրքը գոհ ընելու տալաչեց
Բաւ անոր Կասկոնացին . սիրելի պա-
րոն ստակ մի չունիմ, եթէ դու ստա-
կըդ կ'ուզես՝ ապտակ մի զարի ինձի,
և մնացածները տուր, ապտակը՝ ինչ
պէս որ դիտես, առար սկուդ կ'աժէ,
ես վեց սկուդ միայն պարտաւոր եմ :

27. Երիտասարդ մի իւր անհնա-
զանդութեամբը հօրը համբերութիւն-
նը հատցուցած էր : Որ մի հայրը զայն
սաստկապէս պատժելով, գլուխը քա-
նի մի տեղէն վերաւորեց, և վերաքայժը
բերել տալով ըսաւ անոր որ, բժշկու-
թեան համար բան մի չը խնայէ : Տղան
տեսնելով որ գործը իւր հօր վրայ ծանր
կը նստէր, կ'ըսէր ինքեներէն՝ ստուգիւ-
հայրս մէկմ'ալ զիս ծեծելու պիտի ըզ-
գուշանայ : Բայց հայրը անոր փախիլը
շուտով իմացուց . երբոր առողջացաւ,
վերաբուժին իւր աղուն առջեւ հար-
ցուց թէ որչափ կը պարտաւորիմ : Պա-
տասխան տուաւ վերաքայժը՝ թէ երեւ-
սուն սկուդ, ահաւասիկ երեսուն սկուդ
ըսաւ հայրը, և դարձեալ երեսուն
սկուդ եւս : Թէ որմիտեանքամ ծեծ աւ-
տերու փափաք ունենալու ըլլայ :

28. Երկու պզտիկ մանչ իրենց գիւ-
ղին մօտ մեծ ծառի մի տակ ընկող մի
գտան . այս իմն է ըսու Գետրոսը, վա-
սըն զէյառաջ ես տեսայ, ո՛ր, որս ին-
ձի կը վերաբերի ըստ Եօթնհնէսի
վասն զի դեռ ինչն ես վերցուցի : Աս

տով մեջերնին մեծ կռիւ մի ծագեցաւ :
Լըրիտասարդ մի որ ուղղակի այն տե-
ղէն կ'անցնէր , ըսաւ անոնց՝ թէ ես
ձեզի պիտի հաշտեցնեմ : Լըրիտս պղ-
տիկ տղայոց մէջ տեղը կայնեցաւ : Ըն-
կողը կտորերով ըսաւ : Վեճեկներուն
մէկը առաջ ընկողը տեսնողին , և միւս
կտորը գետնէն վերցնողին կը վերաւ
բերի , իսկ մէջինը ինձի՝ կտրած դա-
տառտանիս վարձքին համար : Եւս դա-
տառորը խնդալով մի սա խօսքն ալ հե-
տեւցուց , գտառտառաններուն սովո-
րական վերջը այս է :

29. Բանաստեղծին մէկը օր մի ազ-
նուականի մի տեսու թիւն ընելու գը-
նաց . ազնուականը զայն դուռը տեւ-
նելով , ըսաւ աղախնոյն բաւական
բարձր ձայնով բանաստեղծը լսելու
չափ . ըսէ անոր որ հա չեմ : Բախիւնը
ըսաւ ու ետ դարձաւ : Բանի մի օրէն
վերջը ազնուականը բանաստեղծին
տունը գնաց այցելու թիւն ընելու , և
քանի մի գործերու վրայօք խորհուրդ
հարցնելու . բանաստեղծը առանց
դուռը բանալու ըսաւ անոր՝ թէ ես
հոս չեմ : Ինչպէս , կրկնեց ազնուա-
կանը , ինձի հետ կը խօսիս , և դու
հոգ չես : Պատասխան տուաւ բանաս-
տեղծը . դու չես ուզեր հաւատալ ինձ ,
որ ես հետդ կը խօսիմ , սակայն աղէկ
քանի մի օր յառաջ ձեր աղախնոյն հա-
ւատացի . գիտցիք պարոն որ ես տու-
նըս եմ , բայց բեղի համար հոս չեմ :

30. Կող մի կամացուկ մի տուն
մտաւ ուր տեղ շատ մի թօշակաւոր
աշակերտներ կային , ճարտարու թեամբ
մը երեք վերարկու գողացաւ և գը-
նաց : Եւսիճաններէն իջնալու աստեղը
անոր աշակերտ մի պատահեցաւ որ
այն տունը վարձով կը բնակէր . ասի-
կայ այն վերարկուները տեսնելով , զար-
մանքով մի անոր հարցուց , ո՞ւրսից գը-
պած ես այս վերարկուները : Պատաս-

խան տուաւ գողը առանց պայլելու .
քանի մը պարտնայք տունն ինձի մաք-
րելու համար : Շատ աղէկ մերիներնալ
մաքրէ ըսաւ աշակերտը իւր վերարկուն
անոր տալով , վասն զի օձիքը լուաց-
ուելու խիստ կարօտ էր , բայց մին
չուկ ժամը երեքը պէտք է որ բերես :
Վրտուս վրայ՝ չեմ պակսիր , ըսաւ գողը ,
ու չորս վերարկուն տաւ գնաց . որ
և գեռ յետս պիտի դարձունէ :

31. Ղընու ական մի ճաշի մորդ հրա-
ւերելով , սպասաւորու թեան հոգը իւր
ծառային յանձնեց : Ի՛նչ բերիր մեզի ,
ըսաւ տէրը իւր ծառային , սեղանին
վրայ բերանը ծածկած աման մի դնե-
լը տեսնելով , պատասխանեց ծառան .
տէր իմ խորոված հաւ մի է : Լըբոր
ճաշողները սեղանէ ելան՝ կանչեց ծա-
ռային ու ըսաւ . Զովհաննէս դու
խելք չունիս , երբոր ես քեզի հար-
ցուցի թէ ի՛նչ բերիր , պատասխան տու-
իր թէ հաւ մի , չէ՞ր կրնար ըսել թէ
հաւեր են ու յոգնակին գործածել .
ճշմոքիտը կուզեսնէ ինձի աղէկ պա-
տիւ չըրիր : Դամանակ մը անցնելէն
վերջը երբոր քանի մի բարեկամներուն
հաղիկերով կուտար , ծառայն աման
մի խաշած միս բերաւ , իւր տէրը հար-
ցուց անոր թէ՛ Զօհաննէս մեղի ի՛նչ
բերիր , իւր տիրոջմէ առած խրատը
միտքը բերելով՝ պատասխանեց ասոնք
եզ են պարոն :

(Պիտի շարանիւրի) :